



2015 թվականի առաջին տաղավար տոնը՝ Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության ավետիսը Վիրահայոց թեմում նշվեց պատշաճ հանդիսությամբ: Դեռևս հունվարի 5-ի երեկոյան Վիրահայոց թեմի եկեղեցիներում մատուցվեց Ճրագալույցի Սուրբ Պատարագ:

Հունվարի 6-ի առավոտից շարունակվեց տոնական տրամադրությունը: Սամցխե Զավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդության Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցում, առաջնորդական փոխանորդ Տեր Բաբգէն վարդապետ Սալբիյանի հանդիսապետությամբ մատուցված տոնական Սուրբ Պատարագին մասնակցեց Ախալքալաքի շրջանային ժողովի փոխնախագահ Նաիրի Իրիցյանը:

Իսկ Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցի այցելեցին և հավատացյալներին Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ շնորհավորեցին Աջարիայի Ինքնավար Հանրապետության վարչապետ Արչիլ Խաբաձեն և Բաթումիի քաղաքապետ Գիորգի Երմակովը:

Հավատացյալներով լեւի-լեցուն թփիխիի Սուրբ Էջմիածին եկեղեցում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ, որի պատարագիչն էր Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը:

Հայոց Եկեղեցի այցելեցին և Սուրբ Ծննդյան տոնական Պատարագին ներկա գտնվեցին Վրաստանի հաշտեցման և քաղաքացիական հավասարության հարցերով պետական նախարար Պաստա Ջաքարեիշվիլին, կրոնական հարցերով պետական գործակալության նախագահ Ջազա Վաչախմաձեն, Վրաստանի խորհրդարանի անդամներ Սերգո Ռատիանին և Ռուսլան Պողոսյանը, Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանության գրասենյակին կից հանդուրժողականության կենտրոնի ղեկավար Բեքա Մինդիաշվիլին, Վրաստանում ՀՀ դեսպանի տեղակալ Վահագն Աֆյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրեյանը, դեսպանության դիվանագետներ, պետական, հասարակական գործիչներ:

Հընթացս Սբ. Պատարագի Վիրահայոց Թեմի առաջնորդը ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության տոնի առիթով: Եկեղեցում տարածվեց Մանուկ Հիսուսի ծննդյան և Աստվածհայտնության ավետիսը:

Սբ. Պատարագի վերջում Թեմակալ առաջնորդի հանդիսապետությամբ կատարվեց Ջրօրհնեքի արարողություն և Եկեղեցու Խաչի կնքահայր վերստին դարձավ արժանավոր հայրդի, հավատավոր քրիստոնյա Յուրի Երեմյանը:

Հավարտ Պատարագի Վիրահայոց Թեմի առաջնորդը շնորհակալության խոսքեր ուղղեց վրաց պետության և կառավարության ներկայացուցիչներին՝ Սուրբ Ծննդյան տոնի առիթով Հայոց Եկեղեցու հավատացյալներին շնորհավորելու կապակցությամբ: Անդրադարձ կատարեց պատմականորեն հավատակից ժողովուրդների հարաբերություններին, հայ և վրաց եկեղեցիների բարեկամությանը:

Այնուհետև հավաքվածներին Սուրբ Ծնունդի, Աստվածհայտնության և ջրօրհնեքի կապակցությամբ շնորհավորանքի խոսքերով դիմեցին Վրաստանի հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով պետական նախարար Պաստա Ջաքարեիշվիլին և Վրաստանի կրոնական հարցերով պետական գործակալության նախագահ Ջազա Վաչախմաձեն և փոխանցեցին Վրաստանի վարչապետի շնորհավորանքները: Հայրենակիցներին բարեմաղթանքի խոսքեր հղեց խորհրդարանի անդամ Ռուսլան Պողոսյանը:



